

ծունէութեան մասին (Դաւրիժ. 295): Կը պատմէ Դարանաղցի (էջ 291) թէ երբ վախճանեցաւ Պօղոս վարդապետ (1620) եւ «մնաց միայն տէր Մօսէս վարդապետն եւ յորդորէր զամենեսեան ի կարգս եւ ի կրօնս, ի պահս եւ յաղօթսն՝ զուխտականս եւ զեկեղեցականս եւ աշխարհականս՝ զարս եւ զկանայս, զհեռաւորս եւ զմերձաւորս եւ զամենայն արեւելեայն: Եւ ել հռչակ նորա ընդ ամենայն աշխարհսն Հայոց. եւ երթային յամենայն կողմանց եւ յարանց եւ ի կանանց եւ յեպիսկոպոսաց, յարեղայից եւ յերիցանց նաեւ ի վարդապետաց ոմանք կերպափոխեալ զինքեանս զային մտանէին ի կարգ կրօնաւորացն ծածկարար, որպէս ներսէս Վանեցին արար»:

Մեղքիսեղեկ կաթողիկոս եւ իւրայինները թէպէտ կը տեսնէին այս ամէնը եւ կը կրճրատէին ատամները, բայց չէին կրնար խոչընդոտն յարուցանել, որովհետեւ կանգնած էր վարդապետին Խանը պաշտպան:

13. ՄՈՎՍԷՍ՝ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Երբ համոզուեցան Մովսիսի հակառակորդները, թէ պիտի չկարենան խափանել անոր գործունէութիւնը, խորհեցան այժմ շահագործել անոր Վարդապետի համբաւը:

Կաթողիկոսի սնանկացած քսակին դրամ էր հարկաւոր. կը յուսային թէ առաջիկայ մեռնորհնէքը եթէ Մովսէս վարդապետի ձեռքով կատարուի, մերձակայ եւ հեռաւոր